ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ԲԻԶԱՆԴԻՈՆԻ

Որ յարդ Կոստանդնուպօլիս անուամբ հռչակի քաղաքամայր հոյակապ՝ յա-փիւնս Պոսփորոսի, յանդիչատակ ժամա-նակաց կրէր նա զանուանս Բիւզանդիոն. այլ պատճառք անուանս և հանգա-մանք՝ անծանօթ կացին միշտ ի պատ-մութեան. և որպէս բազում այն է զի պաճուճեալ առասպելքը ընծային դէպք նշանաւորք, այսպէս և անհաւատալի իսկ լինին դիւրաւ գիտուն և փորձ մը-տաց։ Այսպիսի ինչ կրեաց երբեմն և Բիւզանդիոնն մեր, չքեղազարդ կառու-ցեալն ի ծովու քաղաք, և իւրով մե-ծաշուք պայծառութեամբ նախանձելի բազմաց ի պետութեանց։ Զնմանէ արդ և մերոյս Ղազարայ Փարպեցւոյ՝ երևելի պերճաբանի ի ե դարու, դոյզն ինչ բան գրեալ, ասէ ուրեք և զպատճառս անուանն եղելոյ. որպէս զի փոքրիկ քաղաքիկն այն կառուցեալ իցէ յառնէ միոջէ Բիւզաս անուն կոչեցեալ, և զոր մերձակայ գոլ ասէ Թրակացւոց սահ-մանակցութեանն. և ապա յանցանել ժամանակաց իցէ հռչակեալ անուն նո-րա ի բազում դէպս՝ զոր ի պատմու-թենէ ունիս տեղեկանալ։ Այլ Նոյն ինքն Ղազար (Պատմ. էջ 13,) երկուս իմն ցու-ցանէ քաղաքս, զբունն՝ որ և Կոստան-դնուպօլիս, այս է՝ Կոստանդիանոսի քաղաք, ուր և յաստուածային հրաման-նէ խաղաց և եկն կայսրն Կոստանդիա-նոս և հաստատեաց անդանօր զիւրն ա-թոռ և ի նմանէ յորմէ՛ նեցաւ անուն քաղաքին Կոստանդնուպօլիս. և կամ, ըստ ասից Ծերունւոյն Խորենոյ՝ յանլիսոյ տեղեկացեալ անդէն զնոր ցեղ կայսրն և գլուխն Արևելից. և միւսն այն իսկ է, զոր և ցաւուրս իւր ասէ կոչել Բիւ-զանդիոս, Թաղ մի ևեթ, ոչիսկ որ յառա-ջագոյն չինեալ Բիւզանդիոն էր, Թաղ մի յեղեր Նորին քաղաքի, որ մինչև ցայսօր Նորին անուամբ կոչի Բիւզան-դիոս »։

Ասացուք սակաւուք զերևելի ինչ դէպս քաղաքիս Բիւզանդիոնի՝ որ չբը-ղնապատէր ի հիւսիսոյ փոքրիկ գոգով ծովու՝ որ կոչի արդ Եղջիւր ոսկւոյ։ Քաղաք գեղեցկահայեաց, դուռն տուր-կառուից և վաճառուց և յապահովի յա-մենուստ։ Հիմնարկութիւն քաղաքիս ասի լինել ի Մեգարացւոց [1], որ ղե-ցին անդր գաղութս յամս 667 և 628 նախ քան զԲրիստոս։ Այլ ոչ պակասե-ցին նմա և ձախողակք, յորս բազում այն է՝ զի եկաց որս թշնամեաց, որ եր-բեք երբեք վրդովեցին զնաղաղութիւն Նորա։ Մինչ ի ձեռն էր նա Սպարտա-ցւոց՝ էառ զայն Ալկիպիադէս յամի 408, և յետ ոչ բազում ամաց վերստին գրաւեաց Լիսանդր ի 405. պաշարե-ցաւ ի Փիլիպպեայ մակեդոնացւոյ յա-մի 340. ծանրաբեռն հարկք ճնշէին զնա յամի 279 ի ձեռն Գալլիացւոց։ Իսկ յամին 196 յետ Քրիստոսի առ զայն Սեւերոս կայսր՝ զկնի երից ամաց պա-շարման, յորում հարթ եղեն գետնոյ պատուարք Նորին և չարաչար հարան բնակիչքն։ մինչև հուսկ ուրեմն Կոս-տանդիանոս մարտ ընդ Լիկինեայ մը-ղեալ՝ է առ, և յամի Քրիստոսի մերոյ 330 կառոյց զկոստանդնուպօլիս քաղաք, ի տեղւոջն՝ յորում կայր Բիւզանդիոն, և կոչեցաւ Նոր Հռոմ, որ հանգոյն Հնոյն ամբառնայր ի վրայ եօթանե-ցունց բլրոց, զարդարեալ զնա եկեղե-

1 Աւ ևս եթէ Բիւզանդիոն չինեցաւ ի տե-զ՝ ոչ քաղաքի միոյ հնոյ՝ որ կոչէր Լիկոս, զոր յիշատակէ և Աւստեոս բերթող լատին։ Զոյգ թեր-բևս անդէպ յիշատակել այսու անուամբ զՂէ-ֆէլ գեպ., զորով՝ ասէ Փարպեցին մեր պատմա-գիր (էջ 11), լինել մարտ ընդ Կոստանդիանոս և ընդ զրան Գիթայ։

digitised by A.R.A.R.@

ցեաք և ապարանիք և ուրթ բաղանեաք հասարակաց։

Այլ յաջորդք մեծի կայսերն յաւելին 'ի շինուածս անդր. Թէոդոս մեծն կառոյց զԴուռն Ոսկի, և փոքրն՝ զՍերմուկն, և Յուստինիանոս՝ զսուրբն Սոֆիա և քսան և հինգ այլ եկեղեցիս։ Այլ յետոյ միաւանգամ ձախողութիւնք կեղէին զմեծակառոյց քաղաքն, անդէն յաւուրս Յուստինիանու դրեաթէ բապառ սպառն կործանումն ընկալաւ քաղաքն 'ի 532։ Պաշարումն 'ի խոսրովայ 'ի 616 ամէն մինչև 626, և յԱրաբացւոց՝ յամն 668 և 675, 'ի 716 զ718։ Զկնի ուրեմն տիրեցին Փռանկք կամ Լատինք 'ի 1204, և հուսկ վերջին 'ի Ցաճկայ առաւ յամին 1453։ Այսպիսի և այսքան անգք խռովեցին զԲիւզանդիոնս զայս։

Զայլ բազմադիմի և մանր մանր անցս պատմութեանց, զոր կրեաց անուանիս այս քաղաք, զյեղափոխս իրս՝ զոր ետես յայսչափ դարս, և զոր տեսանէ իսկ յաւուրս մեր, զայն ամենայն թողեալ 'ի պատմութիւնս յաճախագոյնս՝ որ կոչին Բիւզանդարանքն և այլք, տեսցուք զդայսն ինչ բանս զոր ունիւք 'ի նախնեաց մերոց յերանաշնորհ արանց՝ յաղագս շինուածոյ այսր քաղաքիս։ Դոյզն ինչ է բանս, այլ ոչ աննշան՝ հեռասխոյզ քննասիրաց։

Թէպէտ չիք 'ի մեր թարգմանութեան անուն հեղինակին, այլ գտաք 'ի մեծ Բիւզանդարանս՝ լինել Իսիքիոսի ուրումն Միլեսացւոյ։ Իսիքիոս ոք Միլեսացի՝ գրիչ բազմաց մատենից, զորոյ կրկին գրեանս յիշէ ինքնին Փոտ յիւրում Բիւրամատեանին, զմին՝ 'ի Բելայ յԱսորեստանեայց արքայէ ցմահ Անաստասայ կայսեր, և զմիւսն՝ զերս և զարարս Յուստինիանու կայսեր, յիշել յիշի՝ այլ թուականն անստոյգ, և եթէ ո՛ք իցէ սյրդ չգիտեմք ճշգրիտ։ Իսկ 'ի գիրս ինչ Օրինաց յիշատակի Իսիքիոս ոք գպիր ատենակալ՝ զորմէ ասի բազում ինչ գլեալ զմեծէ քաղաքէս։ Այլ այս զնարդ և իցէ, մասն ինչ 'ի փոքրիկ պատմութենէն գտանի յեղեալ 'ի հայ բան՝ չգիտեմք երբ և յոյր ձեռն. սակայն ճարտար ձեռն զբչին կարծիս տայ ոչ սակաւ հնութեան թարգմանութեանս։ Միայն զի 'ի կարգի պատմութեան մասն ինչ յետոյ երևի յաւելեալ յաղագս Օգոստեայ կայսեր և յաջորդացն, զոր ունիմք նշանակել 'ի կարգի գրութեանս։ Դիցուք աստանօր զասացեալդ թարգմանութիւն նախնեաց 'ի զբօսանս բանասիրաց, ծանօթաբանեալ միայն ուր ուրեք պէտք ինչ իցեն իմացուածոյ բանիդ։ Իսկ զբնագիրդ յոյն կարեն գտանել ինդրոյք 'ի մեծ Բիւզանդարանս, յառաջնում հատորի, յէջ 159[1]։

•

Պատմութիւն իսկզբանէ շինութեան հոյակապ քաղաքին և պանծալի Բիւզանդիոնի[2]։

«Ասեն[3] թէ Արգիացիքն առաջինք առտուածահրամանովն[4] վարեցան, վասն որոյ ասացաւ այսպէս... Աստուստ երկու կորիւնք 'ի սրբազանն հասանեն ծով՝

Ուր ձուկն և եղջիւրու առ միմեանս ճաքակէին[5].

առ միմեանս առնելով զմիմեանց բնակութիւն յայսմ վայրի, յորում կիդարոս այլ և Բիւրոնգէս գետք[6] զելս առնեն, մին 'ի հիւսիսի և միւսն 'ի մուտս

1 Բիւզանդարանք, տպագրեալ 'ի Վենետիկ 'ի 1729։

2 Այդ է խորագիր բանիս 'ի հայ ձեռագիրս մեր. իսկ 'ի յոյն դէմ՝ Իսիքիոսի Միլեսացւոյ Հայրենասէր Կոստանդնուպոլսոյ։

3 Յառաջ քան զայս գոն այլ բանք սակաւաստոգ, որ չգոն 'ի մերումս ասա։

4 Աստուածահրամանովն. այսպէս ուղղեցաք ըստ առաջնի գրութիւն ձեռագրիս, որ ունէր աստուածոգովն։

5 Այդ պատգամն Պիւթիայ՝ չորեքստոզեան էր 'ի բնագրին, իսկ 'ի մերումն երկուքք Լեթ. մեք այնպէս թողաք զմերոյ ձեռագրիս կարգ՝ որ փոքր 'ի շատե ոգի ածէ զնմաստս պատմութեան։

6 Երկոքին գետաքս Կիպարոս և Բիւրանգէս (և այս վերջինս կոչի 'ի յունին Բոսֆիոնս և քան Սուր գասայ Բոսֆիքոս) անծանօթք են մեզ այժմ։

digitised by A.R.A.R.@

արևու ծագելով, և առ Միմէոնէս հարսին բաղնին [1] 'ի Ծով խառնին։

Արդ 'ի բախան [2] հասեալք, և զոհիւք զներվայրին [3] հաշտեցուցեալ դիս, ապրաւ ոմն 'ի քահանայագործութենէն յատիչտակեալ սուղ մասն ինչ մսոյ՝ յայլ փոխարկեաց տեղի, որ ունի զԲոսպորոսի [4] զառասացութիւնն. Նախորդի ումեմն ցուցեալ զհաւուն թռիչս [5], յորմէ և Արշաւաբատ [6] վայրն կոչեցաւ։

Եւ այլք զՄեգարացիսն [7] պատմագրեցին 'ի կղզոյ ումեմնէ [8] ազգաւ 'ի վայր իջեալք, և նաւարկութիւն 'ի տեղոյն յայնմիկ առնելով առաջնորդութեամբ Բիւզանդիոս [9], զորոյ զառասացութիւնն առասպելաբանութեամբ յաւելուն քաղաքին։

Արդ ոմանք զսնաղան [10] բանիւք վարեցան, այլ մեք հաւանական զպատմութիւնս կամոյնցն առանձեսցուք, 'ի յինաքոսի դատերէն 'ի Ցովսեայ՝ սկիզբն առն ելով։

Քանզի ինաքոսի Արգիայուց թագաւորին դուստր եղև Ցովսէ [10], և զկոյսս զայս պահէր Արգոս՝ զոր Բազմակն [1] կոչէին։

Այլ քանզի Զևս [2] տուփեալ աղջկան՝ հաւանեցուցանէ զՀերմէս՝ նենգաւ ըսպանանել զԱրգոս, և լուծանելով զկուսութիւն նորա՝ 'ի ձեռն Զևսի յարկառ փոխադրեալ լինի. և Հերայ բարկացեալ ընդ եղեալսն՝ մոլութիւն հասուցանէ երկնչուն [3]. և ընդ ամենայն ածեալ լինի ընդ խոնաւ և ընդ ցամաք. այլ քանզի և 'ի Թրակացւոյն հասանէր գաւառ՝ անուն տեղոյն Թռոյոյր Բոսպորոս։ Եւ ինքն եղեալ 'ի տեղին՝ որ կոչի Եղջիւր [4], յորում՝ վայրի կիդարոս և Բիւրինդէս գեղք ընդ միմեանս զուգեալ խառնին, ներբնակչաց տեղւոյն հրամանատրն զապատնին. և զասացեալն կերաւսեայ [5] 'ի բաց ծնաւ, յորմէ և եղջիւր տեղւոյն անուանեցաւ։

Եւ այլք մանաւանդ դրութեան տեղւոյն յաւելուն զանունդ, և այլք պլատղոյն քաջաբերութեամբ Եղջիւր Ամաղթեան այծուն [6] ասեն։

Այսուհետեւ կերովեսն անեալ [7], և հրա-

1 Ի մեզ գրեալն Սիմէոնէս՝ 'ի յոյն բնագրին ասի Սիմոպրէ, որ յայլ պատմագիրս այլազգ գրի։

2 Ի բախան կոչէ, Թուի քաջիկ կամ ըստ յունէն՝ հասեալք ըստ բախան կամ ըստ սահմանելոյ ճակատագրին։

3 Ներէյոյէ կոչին դիւ կամ գէա, որպէս 'ի ստորև, որ բնիկ գաւառին են պահապանք և ասառուածք բնամակալք։

4 Բոսպորս կամ Բոսպորոս, նշանակէ ըստ բառին Աուշուանց, որպէս ոմանք 'ի մերոց Թարգմանչացն ասացին։ Իսկ ոգոասն աստ 'ի յունէն ասի բաւչ, և Կոստանդին Ժամանակագիրն յոյն ասէ ոգոաս։

5 Զհաւուն թռիչս. 'ի Ձեռագրի մերում գրեալ էր զհաւուն թռ., զոր եդաք ըստ բնագրին։

6 Աշշաւբտ, ոչ է Բոսպորոսդ, այլ (βουκόλια) բառն յոյն, որ լսի արօտ արշաւոց։

7 Արդարև. չատք 'ի բիւզանդեան պատմագրաց զԲիւզաս կոչեն զվաւերս գաղթականութեան Մեգարացւոց և ոչ Արգիայւոց։

8 Ի կղզի ումեմն. համարին ոմանք ընթեռնուլ 'ի յունական բառին զկղզանմիս, զորմէ ունիս տեսանել 'ի բիւզանդական աշխարհագիրս։

9 Բիւզանդիոս, որ ուղղագոյն Բիւզաս յոյնքրէի, էր բնակեցուցիչ գաղթականութեան Բիւզանդիոնի։

10 Ինաքոս, սա ածի զառաջին եգիպտական գաղութս 'ի Յունասան և կանգնեաց զԱրգոս, որպէս կարծի, յամի 1856 նախ քան զՔրիստոս։

Սորա գաւառս Ցով կամ Ցովս փոխեցաւ յարքան՝ առ 'ի զերծանել 'ի մոլեգնութենէ Հերայ. ապա առ զառաջին կերպարանսն, և յետ մահուն պաշտեցաւ Եգիպտոս՝ Խոս յորջորջմամբ։

1 Արգոս որդի Արեստորայ, հարիւրակնեայ, յորոյ 'ի ննջելն՝ կէս աչացն փակեալ կայր, և միւս յեռանն 'ի բաց։ Սմա յանձն արար Հերա զՑով՝ յարքան փոխարկեալ. այլ Հերմէայ թերբերեցուցեալ զնա 'ի ձայն սրնգի՝ հաստատէ զգբլուխն. իսկ Հերայ առեալ զաչսն՝ սփռեաց զտրանովք սերամարդի, ուստի եղ 'ի վեր հրաշալին այն տատուն սերամարդի։

2 Զևս ի նոյն ինքն Արամազդ 'ի մեզ։

3 Ահա ասին սա Ցովս փոխարկեալն յերինջ կամ յարքան և մոլեգնութիւն կրեալ 'ի Հերայէ՝ բերի ընդ Ցով և ընդ ցամաք, և անցեալ 'ի Թրակիա՝ զյիշատակ անուանն Թռոյս 'ի տեղւոյն Բոսպորս։

4 Եղջիւր. գյորջորջումն կերաս Κέρας յերաստակէն և Ամմիանոս Մարկելլինս, Զոսիմոս, իսկ ոմանք կոչեն զան՝ Ոսկեղջիւր։

5 Կերաս կամ Կերաս կամ Կերոնս (Κέρας և Κέρων) էր գաւառս Ցովսեայ գատեր ինանցոսի։

6 Ամաղթեան այծուն եղջիւր անուանի էր առ հինն երբ նշանակ առասուածեան և բազմաբեղուն ասաց, որով յարմարք ինն զանունդ Եղջիւր ընդ այսմ մեկնութեան։

7 Կերովեսն անեալ, նոյն է՝ զոր 'ի վերոյ ասաց Կերաս։ այլ յոյնն ունի՝ Կերաւս անեալ առ Սեմեսարեայ հարսին։

digitised by A.R.A.R.@

չափառ կերպարանաւ պայծառացեալ յոյժ քան զթրակացւոյ կուսանսն գեղեցկանալեալ գեղեղէշ պայծառութիւն, և ընդ ծովայնոյն խառնեալեալ Պիսիդոնի ծնաւ զկոչեցեալն Բիւզաս [1], զանունս զայս մակակոչել 'ի սնուցանողէն իւրմէ Թրակացւոց Բիւզոհիայ [2], որ է տեղի՝ յորում՝ մինչև ցայժմ 'ի ջրոյն քաղաքացիքն առեալ լինին [3]։

Արդ յորժամ յարբունս ածման հասակի համբակն յառաջեալ լինէր, և 'ի Թրակացւոց լերինսն դեգերեալ լինէր, ահագին առ գայանս և բարբարոսս երևելով, մաղթանս [4] ընդունէր առ 'ի կուսակալացն՝ մարտակից լինել նոցա և բարեկամ։

Արդ իբրև Պելիաս [5] Թրակացւոց առ գաղանամարտութեան նահատակութիւն կոչեաց զնա, և զառ 'ի նմանէ կարծիս Բիւզաս պահանջեալ երգն՝ զհնազանդեալ ցուն 'ի քահանայապետութիւն մատուցանելով, և զհայրենի գեան հաստեցուցանելով՝ առ ասացեալ գետոցն խառնումն [6], արծուի մի յանկարծակի երևեալ՝ զսիրտն յափրշտակէր զհոն, և առ ծայրս բոսպորվրան քարանձաւին հանդէպ Բրիւսոպոլսի [7]։ Զոր Ովրեստէս որդի Ագամմնոնի 'ի Բրիսէիդայ ծնեալ [8], փախուցեալ 'ի Կլիտեմնեստրայ դաւաճանութենէն [1], և առ Փիւգինի [2] 'ի խնդիրն փութացեալ քեռ իւրոյ, յիշատակ իւրոյ թաղմանն բնակելոցն 'ի տեղւոջն յայնմիկ զանունս զայս եմոյ՝ առնուանելով զնա Բրիւսոպոլիս, անդաւնոր հասանելով զարձմանն [3] կենցաղոյս։ և անդ հասեալ արծուին ընկենու զսիրտն զոհին 'ի չինութիւն Բիւզանդիոն քաղաքի։ . . . . . [4]

Յորում ժամանակի և Բիւզաս չինէ

1 Քանզի Կլիտեմնեստրայ մոլեալ յէգիսթոս՝ զայրն իւր զԱգամեմնոն զայն ինչ դարձեալն յինքնէ՝ սպանանէր։

2 Այն է՝ Իփիգենի, զոր արկ Ագամեմնոն յեւսքսինեանն ծով։

3 Այս ինքն՝ անդաւնոր պատահելով վախմանի կենացն։

4 Աստանօր հայ օրինակս մեր մնածանէ մասն ինչ օտար 'ի տեղւոյս, զոր անորոշութեամբ կարդեմ։ Արդ պարտ է գիտել թէ Թագաւորքս երիցագոյնք Հռոմայեցւոց՝ կայսերքս յաղագս այսորիկ անուանեցան, զի Աւգոստոս Կեսար ոչ ըստ բնութեան ծնեալ 'ի մորէն իւրմէ, այլ յերիկունս յղութեան մոր նորա գոլով վախճանեցաւ, և կայառեալով մանկանն յորովայնի նորա, պատառեալ զորովայնն արտաքս հանին զմանուկն, անուանեցին զնա լատինացի լեզուաւ Ցէեսար (Cæsar), որ Թագաւորմանի փոխարան։ Սա անեալ եղև Թագաւոր բարեբախտ և ամենայն առաքինութեամբ զարգարեալ. վասն որոյ և Թագաւորքն զնի՝ նորա՝ զանուանակրութիւն նորա պարծանս ինքեանց վարկանելով հոչէին կեսարք և Աւգոստոսք։ Իսկ Աւգոստոս այս երեթեալ 'ի գիւթարանն՝ հարցանէր թէ ովք իցէ որ զնի նորա Թագաւորելոց իցէ ելիանամ պետութեանց Հռոմայեցւոց։ և առաջնումն հարցուածին ոչինչ ընկալեալ պատասխանի։ Դարձեալ երկրորդ անգամ մատուցեալ հարցանէր թէ ընդէր ոչ եռուալ պատասխանի իմոյ հարցուածոց։ Եւ լուեաց այսպէս գիւթարանն, ապա լուաւ պատասխանի այսպէս։ Մանուկ ոմն երթայցի հրամայէ ինձ աստուած երանելի և Թագաւոր՝ զտունս զայս Թողուլ, և գարձեալ այլուր ճանապարհորդել։ այսուհետև զնա զու 'ի տանց մերոց։ Յաւուրս ժամանակաց սորա հռոմայական բարեբաստութիւնն յաճախեաց։ Եւ յետ սորա Թագաւորեաց Տիբերիոս։ և նոյն Տիբերիոս փոխանորդ կացոյց Թագաւորութեան իւրոյ զնախածէնն իւր, այս ինքն զկոյրն։ Այլ առաջին Թագաւորեաց Հերոդէսդ։ յայլազգեաց Հերոդէս որդի Անթիպատրոսի։ իսկ երկրորդ՝ Աբքեղայոս որդի Նոյա։ սա արտասահմանն առ 'ի Հռոմայեցւոց 'ի Բենոնայ 'ի քաղաք Գալլիացւոց։ Երրորդ Թագաւորեաց Հրէից յայլազգեաց Հերոդէս եղբայրս Աբքեղայոսի։ սա գլխատեաց զՍիմանէս Մակաբէյ յաւարանումն ամի Թագաւորութեան իւրոյ։ Յաւուրս սորա և Տէրն մեր չարչարի 'ի Թագաւորութեանն Տիբերի։ Նոյն Տիբերիոս զՊիղատոս Հրէաստանի

1 Ինքն վուլգարն Բիւզաս։ մերս ձեռագիր խառնակ ունէր այսպէս ծնող իւլիսեաս Բիւզաս, զոր ըստ յոլովին կամեցաք ընդհանուր՝ ծնաս վուլգարն Բիւզաս։

2 Բիսուսն։ յն։ (Βυζὴν)

3 Իսմ այսպէս։ «Հարսին Բիւզոհեայ։ յորոյ 'ի ջրոյն և ցայգ ևս առնուն քաղաքացիքն»։ Այլ Հուր կամ աղբիւր Բիւզոհեայ չյիշատակի ուրեք։ բայց գեղակ մի ևեթ գտանի յիշեալ առ Եկեղբոնսի։

4 Մարմնս։ յոյնն ընթեռնու՝ հրեշտակութիւնս։ պատգամս։

5 Պելիաս Թագաւոր Թրակացւոց։ այսպէս մեր օրինակս։ այլ յոյնն՝ Մելիաս ասէ արքայ Թրակիոյ՝ որ ելրեալ այլուր յիշատակեալ։

6 Աստեալ գետոցն են Կիկոպաս և Բիւրանդ՝ ըստ մերումս Թարգմանութեան։

7 Բրիսոպոլիս։ որ է այժմանն Իսթիֆաբ։ որ ետեսս զպարտութիւն Էիկինեայ 'ի մեծէն Կոստանդիանոսէ յամի 323։

8 Ցոյնն ասէ՝ Բրիսէսս որդի լեալ Ագամմնոնի 'ի Բրիսեսեիդայ։

digitised by A.R.A.R.@

զԲիւզանդիոն [1] 'ի Ծովեղերքը Բոսպորա-
կան Ծովուն՝ բարեբաստութեամբ առ-
'ի բախտ յաղողեալ։ Եւ նախ չինէ
զպարիսպ նորին վեհագոյն ինչ հնա-
րիւք. քանզի զբրգունսն իբրև զկենդա-
նիս հնչել և բարբառել ընդդէմ իրերաց
յարմարէր [2]։ Եւ եթէ հնչումն փողոյ
կամ այլ ինչ ձայնի հասանէր 'ի բըր-
գունս՝ մինն առ միւսն փոխատրէր
զձայնն և հասուցանէին առ հանգէպ
կացեալսն։

Ասի և այլ ինչ առ 'ի պատմագրացն,
Հերակլէս կոչեալ բուրգն համբաւէին [3],
թէ զարտաքոյ խորհուրդ թշնամեացն
փոխատրեալ բացայայտէր այնոցիկ որ
'ի ներքոյ լինէին պարսպին։

Եւ յետ կատարման պարսպին՝ տա-
ճար աստուածոյն չինէր։ Առաջին՝
Հռէի [4], 'ի տեղւոջն որ Բասիլիկէ ա-
նուանի, տաճար և անդրիանդ [5] հաս-
տատեաց, որ և Բախտ առ 'ի քաղա-
քացեացն կոչի։...

Ապա 'ի տեղւոջն որ կոչի Ստրատի-
գոն, զկանդեայ և զԱքիւլեայ զբգունն
վերականգնեաց, յորում տեղւոջ և բա-
զանիքն Աքիւլեայ։ յետ այսորիկ Ամ-
փիարեսի դիւցազնն 'ի տեղւոջն որ Սի-
կէք անուանի, որ զմսկանունութիւնն
'ի թզաբեր ծառոյն ընկալաւ։

Եւ փոքր ինչ վերագոյն Պիսիդոնի
տաճար չինեաց, զԱփրոդիտեայ ասա-
ցեալ տաճարն։ Այլ Արտեմիդէս [6] առ-

դատաւոր առաքեաց։ Ի ՈՇԼԴ ամի լինելութեան
աշխարհի եղեն չարչարանքն Ցեառն մերոյ Յի-
սուսի Քրիստոսի։ և 'ի չարժմանէն բազում մա-
սունք Հրէաստանի և ամենայն երկրի կործա-
նեցան քաղաքքն և բնակչքն։ Այլ Պիղատոս յա-
ւուրս Փիլիոսի 'ի պէսպէս պատուհաս անկեալ՝
ինքնասպան եղև։

[1] Ըստ ոմանց՝ կառուցող քաղաքին Բիւզան-
դիոնի՝ կոչեցեալն Բիւզաս, եկաց յաւուրս Թա-
գաւորութեան Ցուլիոսի Ոստիկեայ (673-641),

2-3 Զայս հրաշակաւոյց բրգանց բազումք 'ի
Բիւզանդացւոց հրաշալիս մեկնեն, որպիսիք ո-
մանք Սուիդաս, Կեդրենոս, Զոնարաս և այլք։

[4] Հռէա՝ ըստ գիւցազանից՝ էր դուստր Երկնի
և Երկրի, որ կոչէր և Կիւբէլէ։ Երկին էին Բասի-
լիկէքն, յորոց մին կոչէր՝ Թէոդոսեան Բասիլիկէ։

[5] Անդրիանդ, կամ ընդՀերցիր՝ պաճար ի անդրէ անդ
հաստատեաց։

[6] Թուի ընթեռնուլ. Արն Աքսիդէդեայ առ Թրա-
կայ լերամբ չինէր պաճար։

Թրակայ լերամբ չինէր տաճար, քանզի
զվայրն զայն յիւրում սահմանեաց քա-
ղաքի։ և 'ի պէտս էր, զի բարբարոքն
'ի նմանէ մերժեսցին, և մանաւանդ ե-
մոս՝ որ էր բռնաւոր Թրակացւոց [1], և
առ նոյնդ եհաս 'ի քաղաքդ Բիւզան-
դիոս։ Ի մարտ կոչեալ զնոյն դիւցազն
յօժարեալ տարահուսեցուցանել [2] զնա,
որ և ոչ հանդուրժեաց յանդգնութեան
բարբարոսին, այլ ելեալ մենամարտե-
ցաւ և 'ի փախուստ դարձոյց զնմոս առ
բլուրսն՝ որ էր նմին համանուն։

Արդ Բիւզաս յետ յաղթութեանն ե-
մոսի՝ զգաւառաւն Թրակայ հալածէր
զԹշնամին։ Այլ Ոդրիսէս [3] Սկիւթա-
ցւոց թագաւոր ընդ իստրոս գետ ան-
ցեալ, և առ նոյն իսկ պարիսպն հա-
սեալ քաղաքին՝ տագնապեալ վարանե-
ցուցանէր զայնոսիկ՝ որ 'ի ներքոյն
պարսպին էին։ Վասն որոյ և կինն Բիւ-
զայ աքանչելին փիղապիտ, ոչ ինչ զար-
հուրեալ 'ի բազմութենէ պատերազմո-
ղացն, այլ կանացի հնարիւքն վարեալ
հալածէր զբարբարոսն մարտակցու-
թեամբ վիշապացն։ Քանզի ժողովեալ
զօձս որ 'ի քաղաքին էին 'ի մի վայր,
և ըմբռնեալ զնոսա պահէր զգուշու-
թեամբ, և յանկարծակի երևեալ հա-
կառակորդացն 'ի նմանութիւն նետից
կամ նիզակաց արձակէր զգազանսն
ընդդէմ նոցա, և զյոգունս 'ի նոցանէ
սատակեաց, և այսու եղանակաւ ա-
պրեցոյց զքաղաքն։ Աստուստ այսու-
հետև նախնի առաստղել բերի, ոչ պարտ
գոլ զօձսն՝ զոր ըմբռնեն յայսմ քաղա-
քի կորուսանել սատակմամբ, որպէս
երևեսցուս նմա։

Այլ ոչ (յետ) բազում ժամանակի
այր ոմն անուանեալ Ստրոմպոս [4], և նա

[1] Եմոս կամ Էմոս էր արքայ Թրակիոյ, որ ցան-
կացեալ սատուածական փառաց և պատուոյ՝ որ-
պէս և կին իւր Հռոդոպէ՝ փոխեցաւ 'ի լեառն-
ուսսի և յանուն նոցա կոչին գոտիք լերանց որ
ձգին ընդ Թրակիա և ընդ Մեսիա ստորին,
այժմ Պուքան։

2 Պարտ է իմանալ այսպէս զանդ. «յօժա-
րեալ կործանել զնա 'ի սպան.»։

3 Յօրինակիս մերում Դրիսէս։

4 Ստրոմպոս ասի եղբայրս Բիւզասայ՝ ըստ
բիւզանդացի պատմչաց։

digitised by • A.R.A.R.@

'ի կերովես կնոջէ ծնեալ՝ պատերազմ յարուցանէ ընդդէմ Բիւզանդեայ բազում զորք, ընդ որում և միաբանէին ամենայն ազգն Սկիւթացւոց. ընթանային ընդ նմա և ելլադացւոց զօրքն և Ռոդացւոց՝ ոչ դիւրապարտելի զօրութիւնք. և մերձաւորք սոցունց, կարքեդոնի վայրապետն Դինէոս անուն [1] 'ի Մեգարացւոցն բացաբնակ [2]. անդանօր եղեալ ինն և տասն ամաւ յառաջ քան զԲիւզանդիոնի անձնիշխանութիւնն [3]։

Այլ Քաղկեդոն անուանեալ է վայրն, որպէս ոմանք ասեն, յանուանակցութենէ Խալկեդոն գետոյ, և այլք ոմանք՝ 'ի Քալկիդէս քաղաքէ՝ [4] որ է 'ի Բիւզատացւոց աշխարհին, բացաբնակք եկեալք 'ի նա, զորս և կոյրս կոչեցին վասն չտեսանելոյն զԲիւզանդիոն [5]։

Այլ Իբրև յորմիգոյն նաւուք Դինէոս վայրապետ բռնաւորն կարքեդոնացւոց՝ 'ի մարտակցութիւն եկն Բիւզանդիոսի, նորա աստուստ փոխեալ և զօրացն զանգիտելով՝ նա առ տեղին կոչեցեալ Անապլաւն [1] հասանէր, յորում և դեգերով՝ Իպատանոս [2] զտեղին անուանեաց։ Եւ փոքր ինչ յետոյ անցեալ 'ի քաղաքն և զբարբարոն մերժեալ՝ երկրորդ զօրավար եղև Բիւզանդացւոց հանդիսին [3]։ . . . . . .

Հ. Արսէն Սուքրեան

բեգերան, և զերկիրն կոչէ՝ կոչոյ աշխարհ. castorum terra.

1 Անապլաւն. յոյնն՝ Ἀνάπλους.

2 Իպատանք. յոյնն՝ Ἐαίαι.

3 Յայս վայր ունի մեր ձեռագիրս, այլ զնոսին կարգէ և գրէն բան յաղագս եկեղեցւոյն սրբոյն Սոփիայ, և է այս. «Արդ որպէս յառաջագոյն ասացաւ, հաւաքեցաւ ամենայն նիւթ տաճարին սուրբն Սոփիայ՝ յամս հինգ և ամիս վեց, և չինեցաւ 'ի տասն հազար արանց, ամն ինն և յամիս տասն. և լինին միահամուռ ամք հնգետասան. այլ ամենայն ծախք տաճարին բոլոր չորկայիւք իւրովք առանց սուրբ անօթոցն, և այլ անբաւ զարդուցն և նիւթոցն՝ որ ըստ պարգևի առուսն 'ի Թագաւորէն, էին կենդինարք ՅԾ. (3200). և արկանէր Թագաւորն ըստ ամենայն աւուր 'ի հոգն գրամս արծաթի» (2000)։ Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս, ամէն»։

digitised by A.R.A.R.@